



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1566

Younger Grof

21075)

41-15

03 AUG 2009

1902. № 1457.

ՏԱՐԾՈՒԹՅՈՒՆ

Փոփոխած

2011

ԴԱՍԱՑԵՐ ԿՐՈՆԻ



Ան տառաջիր որդուց ձերոց
խօսել զառա ի նասել ի տան.
եւ ի զնալ ի ճանապարհի եւ
ի ննջել եւ ի բանելու¹
Վ. Մովս. Ժա. 19.

Համայնքն ծրագրի հոգեւոր իշխ նութեան

VII տպագրութիւն

Կազմեց

ԱՐԱԿ ՔՈՅ. ԱՐԱԿԵԱՆ

(Միաբան Մողնութ Ա. Գէորգ Կիկիցիսի)



Անհրաժեշտ է կրօնուալլներին ձեռքի տակ ունենալ իմ
պատուալիրք կրօնիր Աոր-ու խափ նիւթի մշակութիւնը.

Տ. Տ. Ա. Պատինեանցի
1902

2 (075)

Ա-15

С ОРГ-К
2911

2(075)
U-15

0005 JUL 25

Փոխիստած

Ք. ՏԱՐԻ

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

ԲՈՅԱԿՈՒՐԵՐԻ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

«Եւ ուսումնիք որդոց ձերոց
խօսել զառա ի հասել ի տան.
Եւ ի զնալ ի ճանապարհի եւ
ի ննջել եւ ի բառնել»:
Վ. Մովս. Ժա. 19.

Համաձայն ծրագրի հոգեւոր իշխանութեան

VII տպագրութիւն

Խաղմեց

ՍԱՀԱԿ ՔԱՅ. ՍԱՀԱԿԵՍ

(Միաբան Մողնուց Ս. Գէորգ Կկեղեցուց)

Անհրաժեշտ է կրօնուսուցներին ձեռքի տակ ունենալ իմ
«Դասաղիրք կրօնի» նորուխտի նիւթի մշակութիւնը:

Տ Փ Խ Ի Ա
Տպարան Տ. Մ. Ծառինեանցի
1902

25 JUL 2013

1566

Дозво лено цензурою, Тифлисъ, 19-го Октября 1902 г.



57002-66

ՀՐԱՄԱՆԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,
ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նա-
խամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական
Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

ԳՀ. Ա.

Ա Ն Ա Ռ Ա Կ Ո Ր Դ Ի Ւ

Մի մարդ ունէր երկու որդի: Մի օր վոքրն ասաց Հօրը. «Հայր, տո՛ւր ինձ իմ բաժինը քո հարստութիւնից: Հայրը տուաւ որդուն նրա բաժինը: Ճատ օր չանցած՝ վոքր որդին գնաց հեռու աշխարհ և այնտեղ իւր ունեցածը վշացրեց անառակ կեանք վարելով:»

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հէնց այն այն ժամանակ այն երկրումն էլ սաստիկ սով ընկաւ: Նա սկսաւ մուրացկանութիւն անել, բայց դրանով էլ չկարողացաւ ապրել: Վերջը գնաց այն երկրի քաղաքացիներից մինի մօտ և ծառայ դարձաւ: Նա էլ ուղարկեց իւր հանդը, որ խոզեր արածացնէ: Փոքր որդին շնորհակալ կլինէր, եթէ խոզերի կերածն էլ գտնէր, բայց այդ էլ ձեռք չէր ընկնում:

Նա սկսաւ երկար մտածել և ինքն իրան ասել. «Քանի ծառաներ իմ հօր տանը հաց են ուտում, իսկ իս այստեղ սոված մեռնում եմ. կդառնամ հօրս մօտ և կասեմ նրան—հայր. ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ. այլս արժանի չեմ քեզ որդի կոչուելու. ընդունիր ինձ իբրև քո ծառանենից մինը»:

Փոքը որդին վերկացաւ և եկաւ հօր մօտ: Հայրը հեռուից նկատեց նրան. գութը շարժուեց. առաջ վազեց. վզովն ընկաւ և համբուրեց: Որդին ասաց. «Ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ. այլս արժանի չեմ քո որդին կոչուելու»: Հայրն ասաց ձառաներին. «Հանեցէք սրա հին շորերը և նորը հազցըէք. մատանին դրէք մատին. ուտներին կօշիկներ հազցըէք. զեր եղը մորթեցէք. ուտենք և ուրախանանք, որովհետև իս այս որդին մեռած էր, կենդանացաւ, կորած էր գտնուեց»: Եմենքն էլ սկսեցին ուրախանալ:

Եյդ միջոցին մեծ որդին հանդումն էր: Երբ տուն դարձաւ՝ երգելու և պարելու ձայներ լսեց: Ժառաներից մինին կանչեց իւր մօտ և հարցրեց, թէ այդ ինչ է: Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է. հայրդ գեր եղը մորթել տուաւ և ահա ամենքն էլ ուրախանում են»:

Սա նախանձից բարկացաւ և տուն շմտաւ. բայց հայրը, որ կարող էր հրամայել, դուրս եկաւ և աղաչում էր նրան ներս գալ: Մեծ որդին բարկացած պատասխան տուաւ հօրն ու ասաց. «Այս քանի տարի է ծառայում եմ քեզ. քո խօսեից երբէք դուրս չեմ եկել, բայց ինձ մի ուլ էլ շտուիր, որ բարեկամներիս հետ ուրախանամ, իսկ այդ որդիդ, որ քո կայքը կերաւ, փչացրեց, նրա համար գեր եղն ես մորթել»:

Հայրն ասաց նրան. «Որդեակ, դու ամեն

Ժամանակ ինձ մօտ ես, ինչ որ ունիմ, բոլորն էլ քոնն է. դու պէտք է ուրախանաս, որքո եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց և ոչ թէ տրտմնս»:

ԴԼ. Բ.

ՈՂՈՐՄԱՆ ՍԱՄԱՐԱՑՈՒ ԱՌԱԿԸ

Յիսուսը այս առակը պատմեց մի օրինականի:

Մի մարդ երուսաղէմից գնում էր երիքով քաղաքը: Ճանապարհին աւաղակների ձեռն ընկաւ: Սրանք կողոպտեցին անծանօթին. վիրաւորեցին. կիսամահ թողին և գնացին:

Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցաւ. տեսաւ նրան, բայց թողեց, գնաց՝ առանց ուշազրութիւն դարձնելու: Ետոյ նոյն տեղովն անցաւ մի ղետացի: Նա ևս տեսաւ և անցաւ, գնաց: Եկաւ մի սամարացի ճանապարհորդ: Սա երբ տեսաւ նրան, խղճաց. իջաւ գրաստից. վէրքերը փաթաթեց. վրան ձէթ դրաւ, զինի խմացրեց. գրաստի վրայ դրաւ և մօտիկ իջեւանը հասցրեց: Հետևեալ օրը՝ երբ պէտք է հեռանար, իջևանի տիրոջը երկու դահեկան տուաւ և ասաց. «Խնամք տաք սրան, եթէ աւելի ծախս անես, վերապարձիս կվճարեմ»:

Սրանից ետոյ Յիսուս հարցրեց օրինականին. «Ասա ինձ. այն երեքից ո՞րն է ընկեր եղել

աւագակների ձեռն ընկած մարդուն»։ Օրինականն ասաց. «Նա՝ որ ողորմութիւն արաւ՝ խղճաց»։ Յիսուս ասաց. «Դնա, դու էլ այնպէս արա»։

ՀՀ. Դ.

ՈՐՈՇԻ ԱՌԱԿԲ

Յիսուս մի ուրիշ առակ էլ պատմեց—երկրների արքայութիւնը նման է այն մարդուն, որ իւր արտումը բարի սերմը ցանեց։ Բայց երբ մարդիկ քուն եղան, թշնամին եկաւ, ծածուկ արտի մէջ որոմներ ցանեց ու դնաց։ Երբ սերմը բուսաւ, պտուղ տուաւ, որոմն էլ հետը երկեցաւ։

Տան տիրոջ ծառաները մօտ եկան և ասացին. «Ճէր, դու քո արտումը բարի սերմը չցանեցիր, որոմները որտեղից են»։ Նա պատասխանեց և ասաց. «Այդ թշնամի մարդու դործ է»։ Ծառաներն ասացին. «Կամինում ես, որ գնանք դուրս հանենք»։ Նա պատասխանեց. «Ո՞չ, մի գուցէ որոմը քաղելիս, ցորենն էլ հետը արմատից հանէք, թողէք որ երկուսն էլ միասին մեծանան մինչև հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հնձւորներին՝ առաջ որոմները քաղեցէք և խուրձ կապեցէք՝ այրելու համար, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ»։

ՀՀ. Դ.

ԱՅԴՈՒՄ ՄՃԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԲ

Երկնքի արքայութիւնը նման է այն տանուտէլ մարդուն, որ առաւօտք վազ դուրս եկաւ իւր այգու համար մշակներ վարձելու։ Մշակների հետ օրը մի դահեկանի խօսելով՝ ուղարկեց իւր այգին։ Ժամը երեքի մօտ դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին, ասաց նրանց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կստանաք»։ Նրսնք էլ գնացին։ Դարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին, իննին և նոյնպէս արաւ։ Ժամը տասնեմէկի մօտ դուրս եկաւ, ուրիշ պարապ մշակներ զտաւ և ասաց նրանց. «Ամբողջ օրն ինչո՞ւ էք այստեղ պարապ կանգներ»։ Մշակներն ասացին. «Որովհետև մեզ ոչ ոք չվարձեց»։ Այն ժամանակ տանուտէլն ասաց. «Դուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կստանաք»։

Երեկոյեան՝ այգու տէլը վերակացուին ասաց. «Կանչիր մշակներին և տուր նրանց վարձը՝ վերջը եկողներից սկսած մինչև առաջինները»։ Ժամը տասնեմէկին եկողները մօտեցան և մի մի դահեկան ստացան։ Առաջին մշակները կարծում էին, թէ աւելի կստանան, բայց նրանք էլ մի դահեկան ստացան։ Մրանք տանտիրոջից տըտընջացին և ասացին. «Վերջին եկողները մի ժամ

միայն աշխատեցին. իսկ զու նրանց էլ մեզ հառասար վարձատրեցիր. մենք ենք օրուայ տաքութիւնը և ծանրութիւնը քաշել : Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. Ընկեր, քեզ չեմ գրկում. չէ որ դու ինձ հետ մի դահեկանով համաձայնեցար. քո վարձն առ և զնա. ես կամենում եմ, որ այն ուշ եկողին էլ քեզ չափ տամ. միթէ ես իշխանութիւն չունեմ իմ ստացուածի հետ այնպէս վարուելու՝ ինչպէս իմ ցանկութիւնն է. ինչո՞ւ ես նախանձում իմ առատաձեռնութեան պրայ»:

Այսպէս ետինները կլինեն առաջին, իսկ առաջինները՝ ետին:

ԳԼ. Ե.

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԲ

Մի մարդ օտար երկիր էր զնում. Կանչեց ծառաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց— մէկին հինգ քանքար սոււաւ, միւսին՝ երկու, իսկ երրորդին՝ մի իւրաքանչիւրին իւր կարողութեան համեմատ և շտապով հեռացաւ:

Հինգ քանքար ստացողը զործ դրաւ փողը և նրանով ուրիշ հինգ քանքար էլ աշխատեց. նոյնպէս երկու քանքար ստացողը զործ դրաւ և երկու քանքար էլ աշխատեց. Իսկ մի քանքար ստացողը զնաց. գետինը փորեց ու տիրոջ տուած քանքարը թագցրեց:

Մի քանի ժամանակից ետոյ ծառաների տէրը վերադարձաւ և նրանցից հաշիւ պահանջեց: Հինգ քանքար ստացողն եկաւ և աշխատած հինգ նոր քանքարը տիրոջը տալով ասաց. «Տէր, դու ինձ հինգ քանքար տուրիշ, ահա ուրիշ հինգ քանքար ևս աշխատել եմ դրանով»: Տէրն ասաց նրան. «Ճատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ քիչ բանի մէջ հաւատարիմ եղար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանակեմ քեզ, եկ, մասնակից եղիք քո տիրոջ ուրախութեանը»: Մօտ եկաւ երկու քանքար ստացողն և ասաց. «Ինձ երկու քանքար տուրիշ, տէր, ահա ուրիշ երկուսը ևս շտիել եմ դրանով»: Տէրը նրան էլ ասաց. «Ճատ լաւ, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ քիչ բանի մէջ հաւատարիմ զտինուեցար, շատ բանի վրայ կառավարիչ կնշանակեմ, եկ, մասնակից եղիք քո տիրոջ ուրախութեանը»:

Մօտ եկաւ մի քանքար ստացողն և ասաց. «Տէր, ես զիտէի, որ դու խիստ մարդ ես – հինձում ես այն տեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փոել, ուստի վախեցայ քեզնից, զնացի և քո քանքարը գետնի մէջ թաղեցի–ահա քեզ քո տուածը»: «Չար և վատ ծառայ, երբ դու զիտէիր, որ ես հինձում եմ այստեղից, ուր չեմ ցանել և հաւաքում, ուր չեմ փոել, ինչո՞ւ իմ փողը չցանձնեցիր սեղանաւորին, որ ես այժմ տոկոսով պահանջէի նրանից: Ուրեմն

առէք զրանից այդ մի քանքարը և տուէք տասն քանքար ունեցողին իսկ այս անպիտան ծառային ձգեցէք մութը սենեակը, թող այնտեղ լաց լինի և ատամները կրճատցնէ»:

ԳԼ. Զ.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱԾ ԴԱԶԱՐՈՍԻ ԱԹԱԿԲ

Մի հարուստ մարդ հագնում էր թանկադին շորեր ու ամեն օր փառաւոր կեանք էր վարում։ Մի աղքատ մարդ էլ կաք՝ զաղարոս անունով՝ հարստի զրանի ընկած։ սա վէրբերով լիքն էր և կերակրում էր նրա սեղանից թափուած փրչ բանքներով։ Ըները զալիս և լիգում էին նրա վէրբերը։ մարդիկ մոռացել էին նրան։

Աղքատը մեռաւ։ Հրեշտակները տարան նրան արքայութիւն՝ Աբրահամի գողը։ Հարուստըն էլ մեռաւ, բայց սա դժոխք զնաց։ Երբ հարուստը դժոխքում աշքերը բաց արաւ և հեռուից տեսաւ զագարոսին Աբրահամի գողում նստած՝ ասաց։ «Հայը Աբրահամ, խղճա ինձ, ուղարկիր զագարոսին, որ մատի ծայրը ջրով թաց անէ և իմ պապակած լեզուն հովացնէ, ես այս կրակի բոցերի մէջ այլվում եմ»։ Աբրահամը պատասխանեց և ասաց։ «Փու քո կենդանութեան ժամանակ վայելում էիր երկրային բոլոր բարութիւնները, իսկ զագարոսը շարչար-

ւում էր. այժմ նա այստեղ ուրախանում է, իսկ գու տանջւում եա»։ Բացի զրանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այնպէս որ՝ ոչ մեր մօտից ձեր մօտ կարելի է անցնել և ոչ ձեր մօտից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Ազաշում եմ, հայը, ուղարկիր զագարոսին մեր տուն։ Ես հինգ եղբայր ունիմ. թող զնայ, գոնէ նրանց զգուշացնէ, որպէսզի նրանիր էլ չգան այս տանջանքի տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս և մարգարէներ, թող նրանց լսեն»։ Հարուստը պատասխանեց. «Ոչ, հայը Աբրահամ, եթէ մեռելներից մինը երթայ, նրան անպատճառ կլսեն»։ Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լսում, եթէ մեռելներից մինը յարութիւն էլ առնէ և նրանց մօտ զնայ, դարձեալ չեն հաւատաց»։

ԳԼ. Ե.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

Հրէաների Հերովդէս թագաւորի ժամանակ մի քահանայ էր ապրում՝ անունը Զաքարիա։ Նրա կնոջ անունը եղիսարէթ էր։ Երկուն էլ արդար էին և Աստծու բոլոր պատուիրանները ճշտութեամբ էին կատարում։ Նրանք զաւակ չունէին և ծերացած էին։

Մի անդամ՝ երբ պաշտօն կատարելու հերթը Զաքարիային հասաւ, տաճարը մտաւ խընկարկելու համար: Ժողովուրդը դուրսն աղօթում էր: Խնկարկելու ժամանակ հրեշտակը երևաց Զաքարիային: Նա խիստ վախեցաւ:

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Զաքարիա, Աստուած աղօթքդ լսեց. քո կին Եղիսաբէթը մի որդի կունենայ, նրա անունը Յովհաննէս կղնես. Նա Աստծու առաջ մեծ կլինի և իսրայէլի որդիներից շատերին դէպի ճշմարիտ Աստուածը կղարձնէ. Նա կքարոզէ և Աստծու համար ժողովուրդ կպատրաստէ»:

Զաքարիան պատասխանեց հրեշտակին. «Այդ ինչպէս կարելի է, ես էլ, կինս էլ ծերացած ենք»: Հրեշտակը պատասխանեց. «Ես եմ Դաքրիէլը, որ կանգնում եմ Աստծու առաջ. ես ուղարկուած եմ քեզ աւետելու. որովհետև ինձ շը հաւատացիր, համը կմնաս մինչև որ այս բոլորը կկատարուի»:

Զաքարիան պապանձուեց, իսկ ժողովուրդն սպասում էր նրան և զարմանում, որ այդքան ուշացաւ: Երբ տաճարից դուրս եկաւ, այլ ևս չէր կարողանում խօսել: Զաքարիան նշաններով էր խօսում ժողովրդի հետ: Պաշտօնի օրերն անցնելուց ետոյ՝ տուն վերադաշտաւ:

Ժամանակը լրացաւ և Եղիսաբէթը մի որդի ունեցաւ: Երբ նրա դրացիները և ազգականները լսեցին, որ Աստուած մեծ ողորմութիւն է արել, շատ ուրախացան:

Եօթն օրից ետոյ պէտք է մանկանն անուն դնէին և կամենում էին Զաքարիա անուանել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ նրա անունը Յովհաննէս պէտք է լինի: Բարեկամները պատասխանեցին նրան, որ քո ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի: Վերջն ամենքըն էլ հօրը դիմեցին, թէ նա ինչ անուն կցանկանայ դնել:

Այն ժամանակ թուղթ չկար: Զաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գըեց. «Յովհաննէս է սրա անունը»: Խսկոյն լեզուն բացուեց —խօսում և օրհնում էր Աստծուն: Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ի՞նչ պէտք է դառնայ այս մանուկը»:

Մանուկ Յովհաննէսն աճում էր և հոգւով զօրանում: Նա անապատում էր ապրում:

Աստուած հրամայեց անապատումն ապրող Զաքարիայի որդի Յովհաննէսին Յորդանանի կողմերը գնալ և քարոզել: «Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից», ասում էր ամենին Յովհաննէսը: Նրա շորերը ուղտի բրդից էին.

դօտիկը կաշուից, իսկ կերակուրը մարախ և վայրի մեղք էր. Յովհաննէսի մօտ էին գնում երուսաղէմացիները, Հըկաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից և խոստովանում էին իրանց մեղքերը. Ով ապաշխարում էր և խոստանում էր իւր մեղքերը շկրկնել, Յովհաննէսը մը բրտում էր նրան Յորդանան գետի մէջ:

ԳԼ. Ը.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Կրկնել պատմութիւնը և տպա
ԵՌ Գ Զ Ր Օ Ր Հ Ն Ե Ա Ց

Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ
Դամէք մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զառնոյք Կարապետ զմկրտիլն իյանձն:

Որքան զարմանալի է մեղ յարտնուած ալս մեծ
Խորհուրդը՝ արարիչ Աստուածը Յորդանան զալով՝ կամնում էր մկրտուիլ իւր ծառալից. Բայց Կարապետ Յունանէսը յանձն չը առնում մկրտել:

Յորդանան լրտեալ՝ փախտական դառնայր
Վտակ տու վտակ պատգամաւոր լինէր.
Գետ, մի՛ զարհութիր, քո արարիչն եմ ես.
Եկեալ մկրտիմ եւ լրտանամ զմնդա:

Յորդանանն ալս բանը լրելով՝ փախչում էր. Վտակը վտակին պատգամաւոր էր գնում (ալս խորհուրդը լայտնութեամար): Գետ, մի՛ զարհութիր, ես քո ստեղծողն եմ, եկել եմ, որ մկրտուիմ և լւահամ մեղքերը (որիշների):

Այսօր ճայնն հայրական
Յերկնից իջեալ համոյական,
Սիսեցելոյ որդու վկայ.

Այ յորդորէ,
Գետ յորդորէ,
Գետ Յորդորէ:
Յորդորական ճայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

ՅԱՅԻ ԱՍՏՈՒՏԱ
ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՅՈՒՆԻՑԵԱՆ
Ակադեմիա Խոյ
ССР

Այսօր հայր Աստծու համութեան ճայնը լսւում է երկնքից և վկալում է իւր սիրելի Որդու մասին. Ա՛յ յորդորէ, զետ լորդորէ, զետ Յորդանան: Յորդորական ճայնով էր երգում մեծ Կարապետ Յովհաննէսը:

ԳԼ. Թ.

ՅԻՍՈՒՍԻ ԲՆԵԱՅՈՒՄ ԵՆ ՏԱՃԱՐԻՆ

Երեխայի ծննդից քառասուն օր ետոյ՝ Մովլաէսի օրէնքի համաձայն, եթէ մանուկն արու էր և անզրանիկ, ծնողները տանում էին երուսաղէմ, ընծայում էին տաճարին և ետոյ զոհ անելով ետ էին գնում: Հարուստները բերում էին



գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի:
Յիսուսի ծնողներն աղքատ էին, դրա համար էլ մի զոյգ աղաւնի տարան:

Այդ միննոյն ժամանակում Երուսաղէմում բնակւում էր մի արդար ծերունի մարդ, որի անունն էր Սիմէօն: Նա սուրբ Հոգուց իրաւունք էր ստացել շմեռնել մինչև որ աշխարհիս Փրկչին Յիսուս Քրիստոսին տեսնէ: Երբ մանուկ Յիսուսին տաճար բերին, սուրբ Հոգուց ազդմամբ նա և նկատ այնտեղ, մանկանը գիրկն առաւ, օրհնեց և ասաց. «Տէր, այժմ կարող եմ մեռնել, որովհետեւ ես տեսայ այն Փրկիչը, որին դու սկառաստել ես բոլոր ազգերի համար»: Ծնողները զարմանում էին ծերունու խօսքերի վրայ: Սիմէօնն օրհնեց մանուկ Յիսուսին և Մարիամին:

Տաճարում Աննա անունով մի այրի կին ևս կար. նա մարգարէուհի էր, 84 տարեկան. տաճարից ոչ մի ժամանակ չէր հեռացել. իւր օրերը ծովով և ազօթքով էր անցկացնում ու զիշեր ցերեկ ծառայում էր Աստծուն: Երբ սա մանուկ Յիսուսին տեսաւ, շնորհակալութիւն արաւ Աստծուն և պատմում էր ամենին, որ նա տեսել է խոստացեալ Մեսիային:

Ամենայն տարի վետրուար ամսի 14-ն տօնում ենք Յիսուսի տաճարին ընծայուիլը: Տօնի անունն

է Տեառնընդառաջ, որովհետև Սիմէօն ծերունին Յիսուսի (Տիբոջ) առաջ դուրս եկաւ:

ՏԱՂ ՏԵԱՌՆԸՆԴՄՈՒԱՋԻ

Քրիստոս փառաց թագաւոր,
Այսօր եկեալ յընծայումն՝
Կատարելով նա զօրէնս
Քեռասնօրենայ գալստեամբն:

Փառքի թագաւոր Քրիստոսը կատարելով օրէնքը,
ևկաւ տաճարին ընծայուելով՝ քառասնօրեալ հասակում:

Զոր մարգարէն Եսայի
Յառաջազոյն գուշակեաց
Երուաղէմ քաղաքին,
Սիմէօնի ծերունոյն:

(Այն), որ մարդարէն տուածուց զուշակեց Երուաղէմ քաղաքին, Կիմէօն ծերունուն:

ԴԼ. Ժ.

ՅԻՍՈՒԽ ՄՏՏՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԵՄ

Յիսուս Բեթանիա գիւղից Երուսաղէմ դարձաւ: Երբ Զիթենեաց լերան մօտեցաւ, աշակերտներից Երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք այս մօտիկ գիւղը, այնտեղ կգտնէք մի էլ կալած, բացարէք և բերէք» Աշակերտները գնացին և

այնպէս արին, ինչպէս Յիսուս հրամայել էր - բերին էշը և իրանց հանդերձները վրան ձգեցին: Յիսուս նստեց նրա վրայ: Ժողովրդից շատերն իրանց հանդերձները ճանապարհի վրայ էին փռում: շատերն էլ ծառից ճիւղեր էին կտրում ու ճանապարհի վրայ փռում:

Երբ Յիսուս Զիթենեաց սարից իջնում էր, աշակերտներն սկսեցին փառաբանել Աստծուն այն ամենի համար, ինչ որ տեսնում էին: Ժողովրդից շատերն էլ, որոնք տօնի պատճառով ուխտ էին եկել, երբ տեսան, որ Յիսուս Երուսաղէմ է մտնում, արմաւենու ճիւղեր վեր առան և դուրս եկան նրա առաջ:

Երբ Յիսուս մօտեցաւ քաղաքին, ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, երանի դու զոնէ այսօր զգայիր, թէ որն է քո օգուտը, բայց այդ բանը դու չես տեսնում: Կզան օրեր, երբ քո թշնամիները չորս կողմդ կպատեն. քեզ հիմնայատակ կանեն. որդիքդ քո մէջ կկոտորեն ու չեն թօղնիլ, որ քարը քարի վրայ կանգնէ»:

Ժողովուրդը շրջապատել էր Յիսուսին. աղաղակում էր և ասում. «Ո՞վսաննայ Դաւթի որդուն, օրհնեալ է Աստծու անունով եկող թագաւորը, ովսաննա բարձրումը»: Խսկ երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը շարժուցաւ. ամենըն էլ հարցնում էին իրար: «Ո՞վ է սա: Հետը եկող ժողո-

փուրդը պատասխանում էր. «Սա նազարէթի մարդարէ Յիսուսն է»:

Յայոց եկեղեցին Զատկից մի շաբաթ առաջ՝ կիւրակէ օրը տօն է կատարում այդ օրուայ յիշատակի համար տօնի անունն է ծաղկադարդ: Այդ օրը եկեղեցում ուռենու կանաչ ճիւղեր են բաժանում, որ յիշեցնում է նախկին ձիթենին և արմաւենին:

ՇԱՐԱԿԱՆ ԾԱՂԿԱՋԱՐԴԻ

Յորժամ եկն Յիսուս
յերաւաղէմ ի քաղաքն,
Ընդ առաջ եկին ծերքն ոստովք ձիթենեօք
Եւ զԱստուածորդին փառաւորէին:

Երբ Յիսուս Երուսաղէմ քաղաքն եկաւ, ձերերը նրա առաջ դուրս եկան՝ ձեռներին բռնած ձիթենու ձիւղեր և փառաբանում էին Աստծու որդուն (Յիսուսին):

Ի լեռնէն Զիթենեաց
Տարածանէին մանկունքն զհանդերծս իւրեանց
Եւ ոստ ի ծառոց ըերեալ մատուցանէին
Աստուածորդոյն՝ սուրբ թագաւորին:

Զիթենեաց սարիցն սկսած երբակեցւոց մանուկնը փռում էին իրանց հանդերձները ճանապարհի վրայ, ծա-

ուերից ճիշդեր էին կտրում և տալիս Աստծու որդի թագուարին (Յիսուսին):

Ոստովք եւ տերեւեալ ծիթննեօք
Նըրայեցւոց մանկունքն օրնէին,
Ուրախ լե՛ր Երուսաղէմ քաղաք
Եւ ց'օճա՛ Սիօն մայր Եկեղեցի:

Երբայեցւոց մանուկները ստուբով և տերեւազարդ
Ճիթենիներով օրհնում էին և տառւմ. «Ուրախացին,
Երուսաղէմ քաղաք և ցնձմ մայր Եկեղեցի Սիօն»,

ԴԼ. ԺԱ.

ՅԻՍՈՒԽԻ ԽԱՇԵԼՈՒԹԻՒՆ ԹԸ

Կրկնել Յիսուսի խաչելութիւնը (ահս Ա. տարի).

Երբ Պիղատոսը հաստատեց հրէաների վճիռը, զինուորները հանեցին Յիսուսի կարմիք քղամիտը և հաղցրին իւր շոքերն ու տարան խաչելու: Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը:

Երբ եկան Գաղաթն կոշուած սարը հասան, Երբայեցերին Գողգոթա, Յիսուսին քացախ խմացըին՝ լեղիի հետ խառնած, որ ցաւ չզգայ: Յիսուս համն առնելուց ետոյ՝ չէր կամենում խմել: Նրա հետ խաչեցին երկու չարագործների էլ—մինին աջ, իսկ միւսին՝ ձախ կողմում: Ժամը երեքն էր, մեր ժամը 9, որ Յիսուսին խաչեցին: Յիսուսն ասաց խաչի վրայից. «Ներիք դրանց,

Հալը, որովհետեւ իրանք էլ չգիտեն, թէ ինչ են անում»: Պիղատոսը մի տախտակ կախել տուաւ խաչի վերնից: Տախտակի վրայ զրած էր—Յիսուս նազովը եցի Թագաւորը Հրէից: Այս տախտակը հրէաներից չատերը կարդացին: Այն ժամանակ քահանայապետները գնացին Պիղատոսի մօտ և ասացին. «Մ' զըիր թագաւոր հրէից, այլ զըիր, որ ինքն էր ասում, թէ թագաւոր եմ հրէից»: Պիղատոսը պատախանեց. «Ինչ որ զըեցի, զըեցի»:

Զինուորները ծաղրում էին նրան և ասում, «Եթէ դու ես հրէաների թագաւորը, խաչիցն իշիր», Անցուզարձ անողները հայնոյում էին նրան և զլուխները շարժելով ասում էին. «Մ' վ տաճարը քանզող և երեք օրում շինող, ազատիր քեզ, եթէ Աստծու որդի ես և իշիր խաչիցը»:

Այսպէս էլ քահանայապետներն էին անում դպիրների ու ծերերի հետ միասին և ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել, թէ որ նա խրայէլի թագաւորն է, թնդ իշնէ խաչիցը և հաւատանք նրան»:

Խաչուած չարագործներից մինը ևս հայնոյում էր նրան և ասում. «Եթէ դու ես Քրիստոսը, Փրկի՞ր քո անձն էլ, մեզ էլ», իսկ միւսը բարկանալով պատախանեց նրան և ասաց. «Թու չես վախենում Աստծուց, չէ որ ինքդ էլ նոյն պատժի մէջն ես»:

Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նրա մայրը, մօրաքոյրը և Մարիամ մազդաղենացին։ Յիսուս տեսնելով իւր մօրը և Յովհաննէս աշակերտին, մօրը միսիթարելու համար՝ ասաց. «Ահա քո մայրը»։ Այն ժամանակից սկսած աշակերտը իրան մօտ առաւ Մարիամին։

Ժամը 6-ին։ մեր 12-ին, խաւար իջաւ երկը վրայ. Ժամը իննի դէմ, մեր 3-ին, Յիսուս բարձրը ձայնով աղաղակեց «Սստուած իմ, Աստուած իմ, ինչու թողիր ինձ»։ Սրանից ետոյ Յիսուսն ասաց. «Ճարաւ եմ»։ Զինուորներից մինը վերցրեց սպունգը. թաթախեց քացախի մէջ և եղեղնի ծայրին դրած՝ մօտեցրեց նրա բերանին։ Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ասաց. «Հոյը, դու ինձ ինչ որ պատուիրել էիր, կատարեցի, այժմ հոգիս քեզ եմ տալիս»։ Այս ասելով՝ խոնարհեցրեց զլուխը և հողին աւանդեց։ Խսկոյն արել խաւարեց. Երուսաղէմի տաճարի վարագոյրը վերից մինչև ներքեւ պատառուեց. Երկիրը շարժուեց. Ժայռերը պատառուեցան և գերեզմանները բացուեցան։ Հարիւրապետը և պահապանները, երբ տեսան այն ամենը, ասացին. «Ճշմարիտ որ սա Աստծու որդի էր»։ Ժողովուրդը, որ խաշելութիւնը տեսնելու համար էր եկել, եղածները տեսնելով՝ կուրծքը ծեծում էր և հտառնում։

Գլ. ԺԲ.

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կրկնել Յիսուսի թաղումն և բարութիւնը (տես Բ. տարի)։

ԾԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ

Պարզեւատոն ամենեցոն
Այսօր ինդրի պարզեւս ի Պիղատոսէ.
Եւ արկողն զլոյս որպէս զօթոց
Հաւանի պատիլ ի Յովհէփայ։

Ամենին պարզեւ տուողն այսօր ինքն որպէս պարզեւ է խնդրում Պիղատոսից և նա, որ լուսն իբրև հանդերձ ունէր հաղած, յանձն է առնում Յովհէփից պատահուիլ։

Գլ. ԺԴ.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Կրկնել Յիսուսի համբարձումն (տես Բ. տարի)։

ԾԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Համբարձաւ Տէրն մեր ոերկինս՝
Ասելով աշակերտացն՝
Նստարուք ի քաղաքիդ յԵրուսաղէմ՝
Մինչեւ զգենուցուք զգօրութիւն ի բարձանց։

Մեր Տէրն երկինք համբարձաւ՝ ասելով աշակերտ-

Ներին, Երուսաղէմ քաղաքում մնացէք՝ մինչև Երկնքից
զօրութիւն (Ս. Հոգու Հնորհը) կտառառաք:

Միաբանեալ սուրբ առաքեալքն
Միախորհ եւ միակրօն,
Միաբան նստէին ի սուրբ վերնատանն
եւ ակն ոնէին գալստեան սուրբ հոգուն:

Սուրբ առաքեալները մի սիրտ, մի հոգի դարձած
վերնատանը նստած՝ սպասում էին սուրբ Հոգու գա-
լստեանը:

Յանկարծակի եհաս
ի նմանութիւն լուսոյ փայլման
եւ եկեայ թնակեցաւ ի սուրբ առաքեալն
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Կուսոյ փալի նման յանկարծ եկաւ (Ս. Հոգին) և
իջաւ առաքեալների վրայ, երբ որ նրանք վերնատանն
էին նստած:

Գլ. ԺԴ.

Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Կրկնել Հոգեգալուստ (ՏԵ՛Ա Բ. տարի)

ՇԱՐԱԿԱՆ ՀՈԳԻ ԳԱԼՍՏԵԱՆ

Առաքելոյ աղաւնոյ
իջանելով մհծածայն նշշմամը ի բարձանց
ի նմանութիւն լուսոյ փայլման հրազդինեաց
զանկիզելի զաշակերտսն՝
Մինչդեռ նստէին ի սուրբ վերնատան:

Ուղարկուած աղաւնին վերելից բարձր ձախով ի-
ջաւ, նա, որպէս լուսոյ փալ, առանց ալբելու՝ հրաղի-
նեց աշակերտներին, երբոր վերնատանը նստած էին:

Գլ. ԺԵ.

Ս Ո Ւ Ա Բ Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ն Ա Խ Ա Վ Կ Ա Յ Ց

Հոգեգալստից ետոյ՝ կարճ ժամանակուայ մէջ
հաւատացեալների թիւն այնքան բազմացաւ, որ
առաքեալներն այլ ևս չէին կարողանում հոգ տա-
նել նրանց, ուստի ընտրեցին իրանց համար եօ-
թըն օգնականներ կամ սարկաւագներ: Դրանցից
մինն էր Ստեփաննոսը:

Սա մի շնորհալի մարդ էր—այնպէս էր քա-
րոզում աւետարանը, որ ամենին էլ Քըլիստոսի
հետեղ էր դարձնում: Հէնց զրա համար էլ շա-
տերը նախանձում էին և նրան հակառակ խօ-
սում, բայց Ստեփաննոսը Հոգելոյն սրբոյ շնորքով
լցուած՝ ամենին էլ յաղթում էր: Թշնամինները
երբ տեսան, որ խելքով նրան շեն կարողանում
յաղթել, սկսեցին բամբասել, սուտ վկաններ գտան՝
որպէս թէ նրանք լսել են Ստեփաննոսից ասե-
լիս, թէ նազովրեցի Յիսուսը կքանդէ երուսա-
ղէմի տաճարը և Սովորի օքնքները կփոխէ:

Սրա համար Ստեփաննոսին ատեան տարան
և զանգատուեցին նրանից: Քահանայապետը հարց-
րեց. «Ինչ որ քեզ վրայ ասում են, ճիշտ է ար-

դեօք»: Ստեփաննոսը զեղեցիկ կերպով խօսեց և ցոյց տուաւ, որ ինքը Աստծու և նրա ծառայ Մովսիսի օրէնքները սիրում և կատարում է: Ընդհակառակը նրանք են Աստծու օրէնքները շկատարողը և սրտով էլ շատ հեռի են նրանից»:

Այս բանի վրայ թշնամիները խիստ բարկացան: Ստեփաննոսն ամենենին չէր վրդովլում — խաղաղ, հանգիստ էր. նրա երեսին նայողը կկարծէր թէ հրեշտակ լինի: Ս. Ստեփաննոսը երկինքը նայեց և ետոյ ասաց. «Ահա ես տեսնում եմ երկինքը բացուած և Յիսուս հայր Աստծու աջ կողմում նստած»:

Այս որ լսեցին, ականջները ծածկեցին, բարձր ձայնով սկսեցին աղաղակել և յարձակուել Ստեփաննոսի վրայ: Նրան զուրս տարան քաղաքեց, շորերը հանեցին և դրին մի ջաճէլ մարդու ոտների տակ, որի անունն էր Սաւուդ: Ետոյ քարեր վեր առան և սկսեցին Ս. Ստեփաննոսին քարկոծ անել:

Այս քարկոծելու ժամանակ Ս. Ստեփաննոսն աղօթք էր անում իւր թշնամիների համար և ասում. «Տէր Յիսուս, առ իմ հոգին. մեզը մի համարիր սրանց արածը»: Այս խօսքերն ասաց և մեռաւ: Ս. Ստեփաննոսի քարկոծմանը Սաւուդն էլ մասնակից էր:

Այսպէս Ս. Ստեփաննոսն առաջինը (նախ) եղաւ. որ արիւն թափեց՝ վկայութիւն տուաւ,

թէ Յիսուս Աստծու որդին է, դրա համար էլ նախավկայ է կոչւում:

Ս. Ստեփաննոս նախավկայի տօնը կատարում ենք դեկտեմբերի վերջերին:

ԴԼ. ԺԶ.

ՍԱԿՈՒՂԻ ԴԱՐՁԲ

Յիսուսի հաւատացողների թիւը քանի գնում, աւելանում էր և որբան աւելանում էր, այնքան էլ թշնամիններն էին բազմանում: Դրանցից նշանաւոր էր Սաւուդ անունով մինը: Այս այն Սաւուդն է, որ Ս. Ստեփաննոսի սպանմանն էլ մասնակից էր: Սա երուսաղէմուլմ մտնում էր տները, ուր հաւատացեալ էր զմնում, իսկոյն իշխանութեան էր մատնում: Նա սրանով չբաւականացաւ, գնաց քահանայապետի մօտ, իրաւունք խնդրեց, որ Դամասկոս քաղաքը ևս գնայ և եթէ այնտեղ հաւատացեալներ զտնէ, կապած երուսաղէմ ուղարկէ:

Դամասկոսին չհասած՝ յանկարծ երկնքից լոյս վայլատակեց: Սաւուդը երեսի վրայ ընկաւ, երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Սաւուդ, Սաւուդ, ինչու ես ինձ հալածում»: «Սաւուդը հարցրեց. «Ո՞վ ես, Տէր»: Զայնը պատասխանեց. «Ես այն Յիսուսն եմ, որին դու հալածում ես,

բայց վեր կաց. գնա քաղաք. այնտեղ կիմանաս, թէ ինչ պիտի անես»։ Նրա հետ գնացող մարդիկը լուռ ու մունջ կանգնած էին, ձայնը լուռմ էին, բայց ոչինչ չէին տեսնում։ Սաւուզը տեղից վեր կացաւ, բայց ոչինչ չէր տեսնում։ Նրա ձեռքից բռնած՝ տարան Դամակոս։ Նա այնտեղ քանի մի օր մնաց առանց ուտելու և խմելու։

Դամասկոսում բնակում էր Քրիստոսի աշակերտներից մինը՝ որի անունն էր Անանիա։ Ասուած ասաց նրան տեսիլքում. «Անանիա»։ Նա պատասխան տուաւ և ասաց. «Այստեղ եմ, Տէր», Տէրն ասաց. «Վեր կաց և գնա այն փողոցը, որ կոչում է ուզիդ. այնտեղ Յուդայի տանը հարցրու տարսնացի Սաւուզին, նա դեռ աղօթքը չէ փերչացրել։ Անանիան պատասխան տուաւ և ասաց. «Այդ մարդու մասին շատերիցն եմ լսել, որ քեզ հաւատացողներին չարչարում էր երուսաղէմում. այժմս էլ քահանայապետից իրաւունք է ստացել այստեղ զալ և շղթայով կապել քեզ հաւատացողներին։ Ասուած ասաց նրան. «Գնա, նա իմ ընտրութեան անօթն է. նա կքարոզէ հեթանոսներին՝ և կվկայէ իմ մասին թագաւորների և իսրայէլի որդուց առաջ»։

Անտնիան գնաց Յուդայի տուն. ձեռը դըլխին դրաւ և ասաց. «Սաւուզ եղբայր, վերև մտիկ տնելը, այն Յիսուսը, որ ճանապարհին քեզ երեաց. ուզարկեց ինձ քեզ մօտ, քո աչքերը բժշկեմ,

որ սուրբ Հոգւով լցուես»։ Քրիստոնեաններին հաւածող Սաւուզը հաւատաց Քրիստոսին և քրիստոնեայ դարձաւ։ Սաւուզը մի քանի օր Դամասկոսում մնաց Յիսուսի աշակերտների մօտ։

Սաւուզը միւս օրն սկսաւ քարոզել Յիսուսի մասին։ Նա՝ որ եկել էր հաւածելու հաւատացեալ-ներին, ինքը հաւատացեալ էր դարձել։ Լուզները զարմանում էին և ասում. «Սա այն մարդը չէ, որ եկել էր Յիսուսի հաւատացողներին բռնելու և քահանայապետի մօտ ուզարկելու»։ Սաւուզը ևս աւելի գօրանում էր և քարոզում Դամասկոսում։ Դամասկոսացիք չէին կարողանում նրան պատասխան տալ, ուստի վճռեցին, որ սպաննեն նրան։ Քաղաքի դռների մօտ պահապաններ էին նշանակել, որ չփախչէ։ Այս բանն իմացան Յիսուսի աշակերտները—զիշերով քաղաքի պարզութից զամբիւդով վայր թողին և փախցրին։

Սաւուզը դարձաւ երուսաղէմ և եկաւ առաքեալների մօտ։ Ոչ որ չէր ուզում հաւատալ, թէ նա Յիսուսի աշակերտ է դառել։ Աշակերտներից մինը, որի անունը Բառնաբաս էր, պատմեց առաքեալներին Դամասկոսի ճանապարհին պատահածը և թէ ինչպէս Սաւուզը քարոզել է նոյն քաղաքի ժողովընին։ Այնուհետև Սաւուզը համարձակ կերպով քարոզում էր երուսաղէմի մէջ նա-

զովրեցի Յիսուսի մասին: Հըէաները շատ բարկացան և մտները դրին սպանել նրան: Բայց առաքեալները խորհուրդ տուին նրան հեռանալ հայրենի Տարսոն քաղաքը:

Գլ. ԺՀ.

Ս Ա Ն Գ Ո Ւ Խ Տ Կ Ո Յ Ս

Արկնել Թագէոս և Բարդուղիմէոս (տես. Բ. տարի)

Ս. ՍԱՆԴՈՒԽԾ ԿՈՒՍԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Քեւ պարծի այսօր սուրբ Եկեղեցի.
Ով վկայումի սուրբ Մանղուխտ.
Որ զայրականն քո թողեր զաշտօն
Վասն Քրիստոսի հեղեր զարինն քո սուրբ:

Ով վկայումի Ս. Ամանդուխտ, քեղանով այսօր պարձենում է Ս. Եկեղեցին, սրբվետն թողեցիր քո հայրական աթոռի մեծութիւնը և Քրիստոսի համար սուրբ արիւնդ թափեցիր:

Աշակերտեցար առաքելոյն Թաղէի
Եւ ի հասատս ճշմարիտս հաստատեցար,
Ոչ իսոնելով ընդ հեթանոսական պաշտօնս՝
Արժանի եղեր վերանալ առ հայր:

Թագէոս առաքեալին աշակերտումի դարձար. (նրա ձեռու) ճշմարիտ հաւատոի մէջ հաստատուեցար, մեր-

ԺԵՂԻՐ ՀԵՂՄԱՆՈՍՈՎԵԺԻՒՆԸ և արժանացար ԿՐԿԻՆՔ ՊՆԱ-
ՀՄՆ՝ Հայր Աստծու մօտ:

Գլ. ԺՀ.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՁԻ ԽՈՐՎԻԲԱԳ ՄՏՆԵԼԸ

Արկնել Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՍԱԿԱՐՁԻ ՅՈՂՈՎԱՃԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱ-
ՄԱՊԱՃԸ (տես. Բ. տարի)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՁԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Հարակից հոգեղինաց Երկնային զօրացն
Սրբափայլ զգեստով, տէր Գրիգորիոս,
Ի խոր վիրապին իշեր ի տղմին ի մէջ զառ-
նաշունչ օծիցն,
Զի վրեկեցնս զմեզ ի չար վիշտապէն:

Ո՞վ տէր Գրիգորիոս, դու քո մաքուր զգեստով
(անարատ վարքով) հրեշտակներին դասակից եղար, դու^ի իշար դառնաշունչ օձերով լիքը Խորվիրապի տղմի մէջը,
որպէսով մեղ փրկես չար վիշտապից (սատանակից):

Գլ. ԺՀ.

Ս. Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Կ Ո Ր Ձ Ի Խ Ո Բ Վ Ի Բ Ա Գ Ի Ց Գ Ո Ւ Խ Բ Ս Գ Ա Լ Ը

Արկնել Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՍԱԿԱՐՁԻ ՅՈՂՈՎԱՃԻ ՀԱ-
ՄԱՊԱՃԸ (տես. Բ. տարի)

Հայաստանեաց հայր հաւատոյ հեղինակ ընտրեալ
Ճգնողական վարով, տէր Գրիգորիոս,

Ի կոմեղս ոլորեալ, հոսեալ յարենէ սրունք սըր-
բասնեալ մարմնոյն՝
Հաստատելով զմեզ ի վէմն հասատոյ:

Հայաստանցիներիս հաւատոյ հայր, ով Ա. Գրիգո-
րիս, դու քո ճգնողական վարքովը ընտրուեցիր հեղի-
նակ. սուրբ մարմնիդ սրունքները կոճղի մէջ արխանա-
քամ արիր, որպէսզի մեզ հաստատես հաւատոյ վրմի վրաէ:

Տանն Աստուծոյ տեսանող՝ քարի
Արժանացեալ շնորհիւ, տէօ Գրիգորիոս,
Կործանիչ քաֆնեաց, քակտիչ մեհենաց զօրու-
թեամբ իսաշն
Քահանայապետ ընտրեալ աստուծային յայտ-
նութեամըն:

Ո՛վ տէր Գրիգորիս, դու քո ստացած շնորհով
Աստծու տանը (Եկեղեցւն) բարի կառավարիչ եղար-
խաչի զօրութեամբ բազիններն ու մեհեանները քանդե-
ցիր ու քահանապատեա ընտրուեցար Աստծու յախու-
թինով:

ԳԼ. Ի.

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԵՒ ՄԵՍՐՈՎԲ ՄԱԶՏՈՅ

Սուրբ Գրիգոր լուսաւորչից ետոյ կաթողի-
կոսութիւն էին անում նրա ժառանգները: Լու-
սաւորչի տան վերջին ժառանգն էր Ս. Սահակ
պարթեւը: Սա շատ խելօք և բարեպաշտ մարդ

էր: Թէկ ամբողջ Հայաստանը վաղուց քրիստո-
նեայ էր: բայց հայերէն սեփական գիր չունենա-
լու պատճառով՝ քրիստոնէութիւնը ժողովրդի
համար անհասկանալի էր մնում: Եկեղեցիներում
սուրբ գիրքը կարդացւում էր կամ յունաց կամ
ասորւց լեզուներով: Նոյն լեզուներով էր լինում
և ժամերգութիւնը: Սուրբ Սահակը շարունակ
մտածում էր այս մասին և աշխատում էր հայե-
բէն գիր կտնել:

Սուրբ Սահակի ժամանակ կար և մի ուրիշ
մարդ, որ նոյնպէս շատ էր մտածում այդ մա-
սին—զա սուրբ Մեսրովին էր: Սա գիւղացու
որդի էր, ընդունակ, աշխատաէր. լաւ գիտէր
յունաց, ասորւց և պարսից լեզուները: Ս. Մես-
րովիր շատ էր սիրում Ս. Սահակին և երբ նա
կաթողիկոս եղաւ, սա էլ վարդապետ գարձաւ:

Ս. Մեսրովիր վարդապետ զանալով՝ քար-
ուում էր ամեն տեղ և սուրբ աւետարանը մեկ-
նում էր ժողովրդին հայերէն լեզուով: Միւս վար-
դապետներն այդ միենայնը չէին կարողանում
անել: որովհետև չգիտէին ոչ յունաց և ոչ ասորւց
լեզուները:

Այս բանին մի ճար անելու համար Ս. Սա-
հակի խորհրդով ուսումնական մարդկանցից մի
ժողով եղաւ Վաղարշապատում: Այստեղ Վուամ-
շապուհ թաքաւորն ասաց, որ ինքը լսել էր Գա-
նիէլ անունով մի ասորի եպիսկոպոսի մօտ կան

հայերէն՝ տառեր։ Ժողովը մարդ ուղարկեց այդ եսիլսկոպոսի մօտ և բերել տուաւ տառերը, բայց որովհեակ այդ տառերը լրիւ չէին, նրանցով չկարողացան հայոց լեզուի բոլոր հնչիւններն արտայայտել։ Մշանից ետոյ Ս. Մեսրովը զնաց զանազան գիտնականների մօտ և աշխատեց նրանց օգնութեամբ հայոց տառեր գտնել, բայց այդ բոլոր աշխատանքն ի զուր անցաւ, ոչ ոք չկարողացաւ օգնել նրան։

Մարդկանցից յոյսը կտրած՝ Ս. Մեսրովը սկսեց ջերմեռանդ կերպով աղօթք անել և խնդրել Աստծուն, որ օգնէ իրան հայերէն տառեր գտնելու։ Այդ ժամանակ Ս. Մեսրովը այնքան էր մտածում տառերի մասին։ որ էլ ուրիշ ոչինչ չէր լսում և տեսնում։ Նա ոչ արթուն էր և ոչ քնած։ Եւ ահա այդ դրութեան մէջ նրան մի ձեռք երեաց և զբեց տառերը։ Այդ տառերի ձեռ Ս. Մեսրովը մտքումը պահեց և սթափուելուց ետոյ՝ տախտակի վրայ նշանակեց։

Երբ Ս. Սահակը և Վուամշապուհը լսեցին, որ Մեսրովը գտել է տառերը և գալիս է, մեծ բազմութիւնով դուրս եկան նրա առաջը. պատուով ընդունեցին նրան և բերին Վաղարշապատ քաղաքը։

Տառերը գտնելուց ետոյ Ս. Սահակը և Մեսրովը Վուամշապուհի օգնութիւնով սկսեցին ուսումնարաններ բաց անել և սովորցնել հայերէն

տառերով գրել ու կարդալը։ Եկեղեցիներում ժամերգութիւնը հայերէն էր լինում և աւետարանը հայերէն կարդացում։ Ժողովուրդը մինչև հիմա եկեղեցի գնալով բան չէր հասկանում, այժմ իսխտ ուրախ էր, որ ժամերգութիւնը հասկանում էր։

Բացի զբանից Ս. Սահակը հայերէն լեզուով զբեց շարականներ՝ եկեղեցում երգելու համար. յօրինեց շարականների ութը եղանակները, որ մինչև հիմա էլ երգում ենք եկեղեցում։

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՀԱԿԱՅ

Որ յարմատոյ հարցն սրբոց մեզ գաւազան ողինեցեր, զիսահակ տորը հայրապետն, հովուել զհօտ քո Քրիստոս։

(Տէր), դու տորը հայրերի ցեղից Ս. հայրապետ Սահակին մեզ հովուող գաւազան (կաթողիկոս) տուիր, (ժողովուրդ), եկեք վերապատռենք նրան։

Որ զիսաւարն անգիտութեան չայաստանեաց լուծեր, զիմնաստութեան ծագեալ զլոյս սովու որդացս Թորգոմայ։

Դու հակաստանցիներիս տղիտութեան խաւարը փարասեցիր և նրա (Ս. Սահակի) միջոցով Թորգոմայ որդոց համար իմաստութեան լուսը ծագեցրիր։

ԳԼ. ԻԱ.

ԹԱՐԳՄԱՆԻ ՀԱՅ

Ինչքան որ հայոց ուսումնարանների թիւը շատանում էր և եկեղեցիներում հայերէն էին կարդում ու երգում, այնքան էլ յոյների նախանձը աւելի էր շարժում. նրանք ուզում էին, որ առաջուայ նման էլի յունաց լեզուվ կարդան և երգեն հայոց եկեղեցիներում:

Այդ ժամանակ Հայաստանը բաժանուած էր երկու մասի – մի մասը պարսիկների իշխանութեան տակն էր, իսկ միւս մասը՝ յոյների: Զնայերով որ հարկ էին տալիս, բայց ամեն մի մասի ժագաւորը հայ էր լինում:

Յունաց մասի Հայաստանում յոյները չէին թողնում հայերին ոչ ուսումնարան բաց անել և ոչ էլ եկեղեցիներում հայերէն կարդալ ու երգել: Սրա համար Ս. Սահակը նամակ գրեց Կոստանդնուպօլիս յոյների կայսրին և նրանց պատրիարքին ու խնդրեց, որ նրանք ևս թոյլ տան իրանց մասի Հայաստանում ուսումնարաններ բանալ հայերէն սովորցնելու և եկեղեցիներում հայերէն ժամերգութիւն անելու համար: Բացի զրանից Ս. Սահակը նամակ տուաւ Ս. Մեսրոպին, իւր թոռն Վարդան Մամիկոնեանին և ուղարկեց նրանց Կ. Պօլիս: Նրանց հետ ուղարկեց շատ ընծաներ յու-

նաց կայսեր և ուրիշ մեծամեծներին, որպէսզի սրանով շահէ նրանց սիրտը:

Յունաց կայսրը սիրով ընդունեց Ս. Մեսրոպին և Վարդանին ու կատարեց Ս. Սահակի խնդիրը: Այնուհետև յունական մասում էլ բացուեցան շատ ուսումնարաններ, որտեղ սովորցնում էին հայերէն, իսկ եկեղեցիներում ժամերգութիւնը լինում էր հայ լեզուով:

Ս. Սահակը և Մեսրոպը իրանց յառաջադէմ աշակերտների հետ թարգմանեցին Սուրբ Գիրքը և ուրիշ շատ գրքեր: Յառաջադէմ աշակերտներին ուղարկում էին այն ժամանակուայ մայրաքաղաքները, որ այնտեղ լաւ սովորեն յունաց և ասորւոց լեզուները: Սրանք ուսումն աւարտելուց ետոյ Հայաստան գարձան և ուսումնարաններում ուսուցչութիւն էին անում. նոր գրքեր էին գրում և թարգմանում և կամ քահանայ, վարդապետ, եպիսկոպոս դառնալով՝ Հայաստանի զանազան քաղաքներն ու գիւղերն էին զնում և քարոզում ժողովրդին: Ոչ մի ժամանակ Հայաստանն այնքան առաջ չէր դնացել և լուսաւորուել՝ ինչպէս այժմ: Ոչ մի ժամանակ այնքան գրքեր չէին գրուել ու թարգմանուել՝ ինչպէս. Ս. Սահակի, Մեսրոպի և նրանց աշակերտների օրերում:

ՇԱՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Որ զգիտութիւն քո զերկնային եւ զհոգնոր իմաստութիւն առատապէս ծաւալեցնը յեկեղեցիս Հայաստանեայց ի ծեռն սրբոց թարգմանչաց, աղաշանօք սոցա ողորմեա մեզ Աստուած:

Աստուած, դու որ քո երկնալին զիտութիւնը և հոգեոր իմաստութիւնը առատորին տարածեցիր Հայոց եկեղեցիներում սուրբ թարգմանիչների ձեռքով, սրանց խնդիրքովը ողորմիր մեզ:

ՔԼ. ԻՅ.

ԱՏՈՎՄԵԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Վոամշապուհի մահուանից ետոյ հայոց թագաւորութիւնը շուտով վերջացաւ և մեր երկիրը դարձաւ հարկատու պարսիկ թագաւորներին։ Պարսիկները կը ակապաշտ էին, իսկ հայերը՝ քրիստոնեայ:

Այդ ժամանակ Պարսկաստանում յշխում էր Յազկերտ երկրողը։ Այս թագաւորը կամենում էր Հայաստանը նուաճել և բոլոր հայերին էլ իրան ծառայ դարձնել։ Իւր այս միտքը յաջողեցնելու համար մտածեց, որ քրիստոնէութիւնը չնչէ մեր երկրից, որովհետեւ նա ասում էր—քանի որ հայերը ուրիշ կրօն ունին, մեզ հետ չեն միանայ։ Հինց որ նըանց կրօնը փոխենք և ստիպենք, որ

նրանք էլ մեզ նման արե և կրակ պաշտեն։ այն ժամանակ միայն հայերը մեր ծառաները կդառնան և նըանց երկիրն էլ մերը կլինի։ Դրա համար Յազկերտը պարսիկ իշխանների և մողակետների հետ խորհուրդ արաւ, թէ ինչ ձեռվ սկսեն և զլուխ հանեն այս գործը։ Որոշեցին որ թագաւորն իրան հարեան Հոնաց դէմ պատերազմ սկսէ և իւր իշխանութեան տակ եղող հայ իշխանների և զօրքերի հետ պատերազմ գնայ, որպէսզի զօրքի և իշխանների հեռանարով՝ մնացած հայ ժողովուրդը վախենայ և Յազկերտի հրամանին չկարողանայ հակառակել։

Զուտով Հայաստան հրաման ուղարկեցին։ Հայ իշխանները չիմանալով պարսիկների մտադրութիւնը, զօրքերն առան և Պարսկաստան գնացին։ Սըանց հետ միացան պարսիկ զօրքերն էլ և Հոնաց դէմ անցան։ Երկու տարի շարունակ կռւեցին, բայց ոչինչ չկարողացան անել։ Մենակ հայերը չէին որ պարսիկներին օգնում էին Հոնաց դէմ, էլի ուրիշ շատ քրիստոնեայ ազգեր կալին։ Պատերազմից ետոյ Յազկերտը հին զօրքերին իրանց երկիրներն ուղարկեց, իսկ նըանց տեղ նորերը բերել տուաւ։

Այսպէս եօթը տարի շարունակեց։ Իւր մօտեղած քրիստոնեայ իշխաններին մի քանիսին վող էր բաշխում, մի քանիսին պատիւ էր խոստանում և յորդորում էր, որ պարսից կրօնն ըն-

գունեն: Բայց ի զուր ոչ ոք կրօնափոխ չեղաւ:

Յազկերտը երբ տեսաւ, որ հայերը պատիւներից չեն խաբւում և իրանց կրօնը չեն փոխում, այժմ՝ յայտնի հրաման հանեց, որ իւր իշխանութեան տակ եղող քրիստոնեաները հաւատներն ուրանան և արեին ու կրակին երկրպագութիւն տան: Իւր մօտ եղող քրիստոնեայ զօրքերին նորից Հոնաց դէմ պատերազմի տարաւ և շատ շարչարեց ճանապարհն, իսկ պատերազմը վերջացնելուց ետոյ էլ շթողեց, որ իրանց երկրը դառնան, այլ զանազան տանշանքներ տալով նորից ստիպում էր հաւատքներն ուրանալ: Ստովմ Գնունի և մի քանի հայ իշխաններ, երբ տեսան Յազկերտի արածները և հասկացան նրա նպատակը, զօրքն առան և Հայաստան փախան, բայց պարսիկները նրանց ետևից հասան և ամենին էլ կոտորեցին: Մըրանք շմոռացան իրանց պապերի կրօնը և ամենքն էլ մեռան ու մարտիրոսներ՝ նահատակներ դաշտան:

Այս նահատակութիւնը Ասովմ իշխանի անունով կոչում է Ատովմեանց նահատակութիւն: Եկեղեցին սրբանց համար առանձին տօն է սահմանել և ամենայն տարի տօնում է, բուն բարեկենդանի առաջին շաբաթում:

Յազկերտը մնացած հայ իշխաններին շթողեց, որ Պարսկաստանից ետ դառնան Հայաստան: Դենչապուհ անունով մի պարսիկ իշխան մեր

երկիրն ուղարկեց, որ հայերին շարչարէ և ստիպէ ժողովրդին Յազկերտի հրամանին ննազանդուել: Սա եկաւ, երեսանց խաղաղութիւն էր ցոյց տալիս, իսկ ծածուկ աշխատում էր Հայաստանում մնացած հայ իշխաններին միմեանց հետ կռուացնել: Հարկ գրաւ եկեղեցիների վրայ սովորական հարկերը կըկնապատիկ աւելացրեց և այսպէս կամաց-կամաց Հայաստանը տկարացնում էր: Բայց էլի չհասան իրանց նպատակին:

Պարսիկները տեսան, որ այս տեսակ բաներով էլ չեն կարողանում հայերին իրանց հաւատից թուլացնել, ուստի ուրիշ բան մտածեցին: Միհրներսեն հազարապետը մոգպետի խորհրդով հայերի մեծամեծներին մի նամակ գրեց, որի մէջ ցոյց էր տալիս, որ արևապատութիւնը՝ կրակապաշտութիւնը ճշմարիտ կրօն է, իսկ քրիստոնէութիւնը մեր կրօնը սխալ է: Միհրներսեհը հրամայեց որ կամ այս նամակի պատասխանը գրեն և կամ Պարսկաստան գան թագաւորի մօտ:

Հայոց Յովսէփ կաթողիկոսը, երբ այս նամակն ստացաւ, հրաւիրեց գլխաւոր եպիսկոպոսներին և շատ քահանաների, Արտաշատ քաղաքում ժողով արաւ և Միհրներսեն հազարապետի նամակին պատասխան գրեցին: Այս պատասխանի մէջ հաստատում էին, որ տարսիկների կրօնը սխալ է, քրիստոնէականն է ճշմարիտը: Նամակն այսպիսի խօսքով վերջացրին: «Մեր հաւատին

ամենքս էլ հաստատուն ենք: ինչ ուզում ես արա
—քո սուրբ՝ մեր պարանոցը»:

Երբ այս նամակը կարգացին, Յաղկերտը և
պարսիկ իշխանները խիստ զարմացան, թէ ինչ-
պէս հայերը համարձակ և աներկիւդ իրանց կրօնը
պաշտպանում են: Յաղկերտը կատաղեց և մոգպե-
տի խորհրդովը հայոց նախարարներին իւր մօտ
կահչեց: Դրանց թումն էր սպարապետ Վարդան
Մամիկոնեանը և Սիւնեաց իշխան Վասակը, որ
պարսիկների կողմից հայաստանի վրայ կառա-
վարիչ էր նշանակուած: Հայոց նախարարները
թէ և գիտէին Յաղկերտի միտքը, բայց որովհետեւ
իրանց ազգականներից շատերը Պարսկաստանում
նեղութեան մէջ էին, կարծում էին, թէ իրանց
զնալովը կազմտեն նրանց, դրա համար էլ վեր
կացան և զնացին: Բայց զնալուց առաջ Յովսէփ
կաթողիկոսի առաջ խաչ ու աւետարանի վրայ
երդում կերան, որ իրանց կրօնին հաւատարիմ
կմնան:

Առաջ՝ երբ հայոց նախարարները Պարսկաս-
տան էին զնում, թագաւորը նրանց առաջ մարդ
էր ուզարկում և հարցնում էր Հայաստանի որ-
պիսութեան մասին, բայց այս անզամ այս պա-
տիւը շարին հայ իշխաններին, այլ բարկացած
խօսեց նրանց հետ և ասաց. որ եթէ վաղը իւր

հետ արեին երկրպագութիւն չեն տայ, ամենքն
էլ խիստ կպատժուեն: Նա ասաց, որ զօրք կու-
ղարկէ Հայաստան և նրանց ընտանիքն ու բոլոր
հայերին կոտորել կտայ: Հայ նախարարները պա-
տասխանեցին և ասացին. «Մեր սուրբ հաւատը
չենք կարող մոռանալ, ինչ տանջանք էլ կուզես
տուր»: Յաղկերտը խիստ բարկացաւ և հրամա-
յեց, որ ամենին էլ բանտարկեն: Հայ նախա-
րարները շատ փող տուին պարսիկ իշխաննե-
րին, որ ազատուեն և իրանց երկիրը դառնան,
բայց հնար չեղաւ: Այնուհետեւ ամենքն էլ յոյսերը
միայն Աստծու վրայ դրին:

Յաղկերտը հայ նախարարներին բանտար-
կելուց ետոյ՝ զօրք պատրաստեց, որ հայերին
հեռու երկիրներ քչէ, որպէսզի մնացած
հայերին իւր կամքը կատարել տայ: Պարսիկ իշ-
խաններից մէկը, որ ծածուկ քրիստոնեայ էր և
գիտէր այս բանը, եկաւ բանտարկուած նախա-
րարների մօտ ու յայտնեց թագաւորի միտքը:
Նա խորհուրդ տուաւ, որ երեսանց նրա հրամա-
նը կատարեն՝ մինչև բանտից կազմտուեն, ի-
րանց երկիրը կզառնան, իսկ ետոյ էլի կարող են
ազատ կերպով քրիստոնեայ լինել: Նա ասաց՝ որ
սրանով միայն կարող էր դուք ազատուել և ձեր
անտէր մնացած ժողովրդին պաշտպանել:

Հայ նախարարները հաւանեցին պարսիկ իշխանի տուած խորհրդին և որոշեցին երեսանց կատարել թագաւորի հրամանը, իսկ երբ Հայաստան դառնան՝ նորից զիմադրեն Յազկերտին: Վարդան Մամիկոնեանն սկզբում հակառակ էր երեսանց ուրանալուն էլ, բայց վերջը համաձայնեց:

Թագաւորին յայտնեցին, որ հայ իշխանները պատրաստ են նրա կամքը կատարելու: Յազկերտը շափից դուքս ուրախացաւ. նախարարներին պատիւներ տուաւ, մի գունդ դօրք և 700-ից աւելի մոգ և մոգակետներ ուղարկեց Հայաստան, որպէսզի հայերն իրանց տուած խօսքից ետ չկանգնեն:

Պարակաստանի հայ նախարարների մօտ քահանաներ ևս կային: Սրանք, երբ իմացան նախարարների ուրացութիւնը, խիստ տրտմեցան. հեռացան նրանցից, իրանցից մինին առաջուց Հայաստան ուղարկեցին, որ այս ուրացութիւնն իմաց տայ ամենին: Հայաստանի եպիսկոպոսներն ու քահանաները, երբ լսեցին նախարարների ուրացութիւնը, խորհուրդ արին և որոշեցին, որ ամեն միջոց գործ դնեն և թոլլ շտան ուրացեալներին և մոգերին Հայաստան մտնելու: Որոշեցին նոյնպէս՝ որ ոչ մի ուրացողի շմնայեն – ոչ

ազգականի, ոչ եղբօր, ոչ հօր, ուստի և այս նպատակով թէ մարդիկ և թէ կանայք դէնք առան և պատրաստ սպասում էին:

Հայ նախարարները պարսից զօրքի հետ նոյեմբերը ամսին Հայաստան մտան: Մի ամսի շափ հանգստանալուց ետոյ, մի կիւրակէ մոգպետը մոգերի հետ գնաց եկեղեցի և կամենում էր ժամերգութիւնը խանողարել: Ղեռնդ քահանան խաչը ձեռին յարձակուեց մոգերի վրայ և թոյլ շտուաւ: Ժողովուրդն էլ փայտով վրայ ընկաւ և շատերի գլուխը կոտրելով դուքս արին եկեղեցուց: Մոգպետը զարհուրեց, իւր աչքով տեսաւ, թէ ինչքան հաստատ են հայերն իրանց հաւատին, ուստի յոյսը կտրեց այն բանից, թէ հնարաւոր է հայերին կրակապաշտ դարձնել: Ետոյ Վասակ իշխանին իւր մօտ կանչեց, խիստ յանդիմանեց և ասաց. «Եթէ դու ևս շես կամենում մեր կրօնն ընդունել, պարզ ասա ինձ, որպէսզի ես մեծ մոգպետին և Միհրներսեհին զրեմ, որ համոզեն թագաւորին և թոյլ տան ձեզ ազատ կերպով ձեր կրօնը պաշտել»:

Անօրէն Վասակը մի կողմից վտուասիրութեան համար, միւս կողմից, երբ յիշում էր, որ իւր որդիքը պատանդ են Պարսկաստանում, եթէ քրիստոնեայ մնայ, նրանց կսպանեն, այդ պատճառով էլ սրտանց ուրացել էր իւր հաւատը: Նաշատ աշխատեց քաղցը խօսքերով համոզել մոզ-

պետին, որ հանգստանայ: Ինքն էլ Սիւնեաց երկ-
քից շատ զօրք բերել տուաւ, որ թագաւորի
հրամանը ուժով կարողանան կատարել տալ: Վա-
սակն ամեն կերպ աշխատում էր տարածել կրա-
կապաշտութիւնը. մի քանիսին փող էր տալիս,
մի քանիսին փառք և պատիւ էր խոստանում,
որ կրակ պաշտեն. իսկ մոգերին էլ նախարար-
ների տներն ուղարկեց. որ բարողն կրակապաշ-
տութիւնը:

Եպիսկոպոսները, երբ տեսան Վասակի ա-
րած չարութիւնները, հայոց բանակի ուրացեալ
իշխաններին և քրիստոնէութեան հաւատարիմ
մացողներին իրարից բաժանեցին: Ժողով արին.
Վարդան սպարապետին և բոլոր հաւատարիմ իշ-
խաններին ժողովի հրաւիրեցին. իստոյ յանդի-
մանեցին նրանց, որ աչքով տեսնում են Վասա-
կի չարութիւնները և ոչինչ չեն անում: Նրանք
աւելացնում էին. «Եթէ Վասակի արածները
դուք էլ հաւանում էք, առաջ մեզ սպանէք և
ետոյ ինչ ուզում էք, այն արէք, իսկ եթէ ոչ՝
պէտք է պատժել նրան»: Իշխաններն ամենքն
էլ մի սիրտ, մի հոգի դարձան և պատրաստու-
եցան ուրացեալ Վասակի դէմ գնալ ու նրա չա-
րութիւններին վերջ դնել: Այս բանին մէկը միայն
շնաւանեց: բայց իսկոյն միւսները վրայ ընկան
և տեղն ու ուտեղը քարկոծ արին ու սպանեցին:

Այս բանը միւսների վրայ մեծ ազդեցութիւն
արաւ:

Հայ իշխաններն իրանց զօրքերով Վասակի
դէմ գնացին: Պատերազմում Վասակը գերի ըն-
կաւ շատերի հետ. եկաւ եպիսկոպոսների ոտներն
ընկաւ. երգում կերաւ և խոստացաւ քրիստոնէ-
ական կրօնին հաւատարիմ մնալ: Եպիսկոպոսները
ներեցին:

Վասակի զունդը ցրելուց ետոյ հայոց զօրքը
յարձակուեց այն բերդերի վրայ, որտեղ պարսիկ
զօրք և մոգեր կային: Առան այդ բերդերը և մո-
գերից մի քանիսին սպանեցին, մի քանիսին փախ-
ցրին և կրակատուններն էլ կործանեցին: Այս
բոլոր պատերազմների մէջ Աստուած յայտնի կեր-
պով օգնում էր հայերին:

Սիւնեաց Վասակ իշխանը նորից սկսաւ չա-
յաստանը տակն ու վրայ անել – մոռացաւ իւր
խոստումը, որ արել էր խաչի և աւետարանի
վրայ: Ճատ ամուր բերդեր կործանեց. գիւղեր
այրեց. նախարարների ընտանիքներ բռնեց և իւր
երկը բերդերի մէջ դրաւ. եկեղեցիները քանդեց
և քահանաներին բանտարկեց:

Վարդանն այդ ժամանակ Աղուանքում էր,
Վասակի չարութիւններն իսկոյն գրեցին սպարա-
պետին և յայտնեցին, որ շատ նախարարներ
միաբանել են Սիւնեաց իշխանի հետ: Այս լուրն

առնելուն պէս՝ Վարդանը իւր զօրքով Հայաստան դաշտաւ, Վասակը գիշերով փախաւ իւր երկերը:

Բայց որովհետեւ ձմեռը վրայ էր հասել և Վարդանը պաշար չունէր բոլոր զօրքերը իւր մօտ պահելու, այդ պատճառով նրանց մեծ մասը իրանց տեղերն ուղարկեց խիստ հրաման տալով որ գարնան կրկին իւր մօտ ժողովուեն: Իւր սեպհական զօրքերից շատ զնդեր Վասակի երկիրն ուղարկեց, որոնք շատ տեղեր քար ու քանդարին և ուրացեալներին այնքան նեղը ձգեցին, որ կերակուր չունէին, սատկած իշխ և ծիու միւ էին ուտում:

Որպէսզի սլարսից թագաւորի սիրտը շարժեն և ստիպեն նրան մի ձեռվ իւր մտքից ձեռք վերցնել, գերի բռնուած մի պարսիկ իշխանի ազատութիւն տուին. Եղած վնասները և Վասակի արածները մէկ-մէկ պատմեցին նրան ու Պարսկաստան ուղարկեցին, որ զնայ և Յաղկերտին պատմէ այս բոլորը: Յաղկերտը, երբ այս մարդուց Հայաստանի նեղ վիճակն իւսցաւ, այնպէսց յոյց տուաւ՝ որպէս թէ ցաւում է. Նեղութեան մէջ եղող քրիստոնեաներին հրամայեց ազատութիւն տալ. պատուիրեց, որ թոյլ տան իրանց կրօնը համարձակ կերպով պաշտել, քահանաներին էլ թոյլ տուաւ, որ եկեղեցիների մէջ քրիստոնէական պաշտօն կատարեն: Նամակ գրեց Հա-

յաստան, ասաց որ ամենին էլ ներեն և կատարեալ ազատութիւն տան: Այս բոլոր կարգադրութեան միտքն էր հայերին երեսանց հանդարտացնել, իսկ ծածուկ իւր պատրաստութիւնն էր տեսնում: Բայց երբ տեսաւ, որ հայերն իրամիտքը հասկանում են և չեն խաբւում, այն ժամանակ զէնքի զօրութեամբ՝ ոյժով կամեցաւ ստիպել հայերին, որ թողնեն իրանց հաւատը: Մը համար մեծ զօրք պատրաստել տուաւ. Միհրներսեհին էլ նրանց վրայ զօրապետ նշանակեց և մեր երկիրն ուղարկեց: Բայց հայերը, որոնք շատ անգամ էին խաբուել պարսիկներից, այս անզամ չսիսալուեցան, նրանք էլ իրանց պատրաստութիւնն էին տեսնում:

Միհրներսեհը զօրքն առած Հայաստան եկաւ. Վասակին իրա մօտ կանչեց և բոլոր զործերը նրան յանձնեց: Վասակն էլ ժողովեց այն նախարարներին, որ իւր մօտն էին, նրանց զօրքը իւր զօրքի հետ միացրեց և Միհրիքի բնակիշներին ստիպեց կրակապաշտ դառնալ:

Վարդան սպարապետը յոյսն Աստծու վրայ դրաւ և պատրաստուեցաւ նրանց դէմ գնալու: Այն նախարարները, որոնք իւր հետ համաձայն էին, 66,000 զօրք հաւաքեցին, գնացին թշնամու դէմ և բանակ ձգեցին Արտազ դաշտում, որ-

տեղ մի ժամանակ Սանդուխստ կոյսը նահատակուեց: Թշնամու զօրքը երկու անգամ աւելի էր: Այստեղ եկան Յովսէփի կաթողիկոսը և Ղեռնդ քահանան՝ ուրիշ շատ քահանաների հետ, որպէսզի նրանք էլ իրանց կողմից այս հոգեոր պատերազմին մասնակցեն:

Կասակը և պարսից իշխանները, երբ տեսան, որ հայ նախարարները միաբանուել են, վախեցան նրանց զօրութիւնից, սկսեցին նորից սուտ հրդումներ անել, որ իրարից բաժանեն, բայց ի գուրք - էլ ոչ ոք չհաւատաց նրանց:

Երկու կողմն էլ պատրաստ կանգնած էին իրար դէմ ու դէմ Տղմուտ դետի ափին: 451 Ժուի Հոգեգալստեան օրն էր: Ս. Ղեռնդը պատարագ արաւ, Ս. Յովսէփի հրամանով ճառ խօսեց և ոգեսրեց ամենին: Զօրքը հազորդուեց և պատերազմի պատրաստուեց: Ս. Ղեռնդից ետոյ Վարդան սպարապետը խօսեց և ոգեսրեց, որ բաջութեամբ կուտեն:

Վարդանը հայոց զօրքը չորս մասի բաժանեց, ամեն մի մասը մի իշխանի յանձնեց և յարձակուեց իրանից չորս անգամ աւելի պարսիկ զօրքի վրայ:

Վարդանը երկար ժամանակ քաջութեամբ պատերազմեց, բայց ընկաւ՝ ընդունելով մարտիրոսական պսակ: Թէս Վարդանը մեռաւ, բայց պատերազմը մինչև երեկոյ շարունակուեց - յաղ-

թութւնն անորոշ մնաց: Այս պատերազմի մէջ հայերի կողմից ընկան 1,036, իսկ պարսիկներից՝ 3,544 հոգի:

Այսպէս մեր պապերը մեռան և թոյլ շտուին, որ պարսիկները ձեռք տան մեր եկեղեցուն և հաւատին: Մեր եկեղեցին էլ նրանց շմոռացաւ և տօն նշանակեց, որ ամեն տարի Բարեկինդանի երեքշաբթի և հինգշաբթի օրերը տօնուի: Երեքշաբթուայ տօնը նշանակուած է այն հոգեորականների համար, որոնք Ս. Ղեռնդի հետն են նահատակուել և տօնն էլ կոչւում է Ղեռնդեան ցործինն, իսկ Վարդանի հետ ընկնող վկանների տօնը կատարում ենք հինգշաբթի, որ կոչւում է Վարդանանց նահատակութիւն:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՂԵՐՈՒԴԵԱՆԾ

Որք եկեալ հասեալ լինէին սեւագունդ զօրն պարսից, զի յափշտակեսցեն զառաջնորդսն Հայատանեայց զՄուրք Ղերոնդեանա:

Պարսից սեւագունդ զօրքը գալիս, հանում էր մեր երկիրը, որպէսզի հայաստանցիներիս առաջնորդ Ս. Վեռնդեաններին բափշտակէ (տանէ):

Որք շուեալ զնացեալ լինէին ի պալատն անօրէն թագաւորին, զի վկայեցեն մշմարդիտ սուրբ, երրորդութեան սուրբ Ղետնդեանքն:

Սուրբ Գեորգեանները վեր էին կացել, գնացել
էին անօրէն թագաւորին ծառայելու, որպէսզի վկայեն
սուրբ Երրորդութեան ճշմարտութեանը:

Հուատորիչն ամննեցուն Ղետոնդիէ սուրբ վար-
դապետն խոհական մեծ խորհրդով
խրատեալ՝ լցոյց զաշակերտեալսն. ծաւալեալ
զլոյս զիտութեան յոգիս արանց կատարելոց կա-
մաւոր յօժարութեամք կատարեցան սիրով փոկչին:

Ամենին լուսաւորող Ա. վարդապետ Գեորգը իւելա-
ցի և մեծ մռքերով խրատելով (աշակերտեալներին), տա-
րածեց զիտութեան լուսը հասակաւոր՝ կատարեալ մար-
դոց սրտերում, որոնք ի սէր Յիսուսի՝ կամաւոր կեր-
պով նահատակուեցան:

Գլ. Ի՞՞.

Խ Ա 2 Վ Ե Բ Ա Յ

Պարսիկների Խոսրով թագաւորը Քրիստոսի
ծնդից 614 տարի ետոյ Երուսաղէմ քաղաքն ա-
ռաւ և Յիսուսի սուրբ խաչը գերի տարաւ: Բոլոր
քրիստոնեանները խիստ տխուր էին այս բանի հա-
մար: Բայց խաչի գերութիւնը երկար ճքաշեց, ո-
րովհետև 15 տարուց ետոյ յոյների կայսը Հերակլը
պատերազմեց Խոսրովի հետ, յաղթեց նրան և
սուրբ խաչը գերութիւնից աղատեց: Սրանից
ետոյ խաչափայտը մաս-մաս արին և բաժանե-
ցին բոլոր քրիստոնեաններին:

Երբ խաչը գերութիւնից ազատեցին, առան-
ձին տօն նշանակեցին, որ կատարուում է սեպ-
տեմբեր ամսուայ մէջ: Այդ օրը թափոր են ա-
նում եկեղեցւոյ շուրջը, խաչը բարձրացնում՝
վերացնում են և օրհնում են աշխարհիս չորս
կողմերը: Որովհետև օրհնելիս խաչը բարձրաց-
նում, վերացնում են, զրա համար էլ տօնը կոշ-
տում է Խաչվերաց:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ԽԱԶԻ

Ազատինեցաք ի խաչ քո, արարիչ ուսիտենից,
Որ նտուր մնաց պահապան յաղթող ընլդէմ թղթ-
նամնոյն.

Աղաչեմք սովաւ գրկիչ պահպանեա զանձինս մեր:

Յաւիտենից Արարիչ, լուսներս քո խաչի վրալ ենք
զլել, այն խաչի, ով մէզ լաղթող պահպան նշանակե-
թիր թշնամու դէմ: Խնդրում ենք, ովք Փրկիչ, սրանով
պահպանիր մեզ:

Գլ. Ի՞՞.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ո Ւ Զ Ե Ւ Լ

Հին ժամանակուայ քրիստոնեանները մեզ
նման փառաւոր շէնքերով եկեղեցիներ չունէին.
Նրանք հաւաքւում էին մի հասարակ տան մէջ,
շատ անզամ գետնափոր տներում և միասին ա-
զօթում էին, իսկ աղօթքից ետոյ հացը կոտրում
էին և բաժանում, ետոյ հաղորդվում էին: Տան

վերեկի մասը փոքր ինչ բարձր էր. այստեղից էլ քարոզում հովիւր—քահանան:

Աւելի ուշ ժամանակներում աղօթատեղու՝ եկեղեցու միջին մասին նաւի ձևութին, որ նշանակում էր, թէ եկեղեցին մի նաւ է, որի մէջ մտնողները՝ քրիստոնեանները նաւում են դէպի նաւահանգիստ՝ երկնքի արքայութիւնը: Ումանք էլ կլոր ձև էին տալիս: Նաւի մէջ մտնելու իրաւունք ունէին միայն նըանք, որոնք մկրտուած էին, իսկ շմկրտուածները գաւթում—նաւի ետևում, արևմտեան կողմում սիւներ կային՝ վարագոյրով միացրած, ահա այնտեղ էին կանգնում, իսկ երբ մկրտում էին, իրաւունք էին ստանում նաւի մէջ մտնել:

Փոքր ինչ ետոյ նաւակի աջ և ձախ կողմերում երկու փոքրիկ նաւեր ևս որոշեցին և այսպիսով եկեղեցին խաչի ձև ստացաւ, որ մինչեւ մեր օրերը պահպանւում է: Երբ քրիստոնէութիւնն ազատ կրօն գարձաւ, սկսեցին ամեն տեղ գեղեցիկ եկեղեցիներ շինել խաչաձև յատակագծով, որ ծագել է երեք նաւերի միաւորութիւնից: Կլոր ձևն էլ մեր ներկայ զմբէթն է, որ եկեղեցու մէջաեղումն է: Եկեղեցու սիւները միանում են կամարներով, որ երկինքն է յիշեցնում մեզ: Եկեղեցու շինուածքը բաժանւում է երեք մասի—գաւիթ, ատեան և բեմ:

Դաւիթ — Այժմեան եկեղեցիները զաւիթ

չունին, սա հին եկեղեցու այն մասն է, ուր կանգնում էին չմկրտուածները (երախանները):

Առեան—Այն տեղն է, ուր կանգնում են հոգեսորականները և ժողովուրդը: Եկեղեցու հին սովորութեան համաձայն՝ առաջ կանգնում են հոգեսորականները, ետոյ տղամարդիկ, իսկ ամենից վերջը՝ կանայք: Սեղանի աջ կողմի պատի մէջ աւագանն է, իսկ նըա դիմաց՝ ձախ կողմում բուրվառանոցը::

Բեմի—Ատենից եօթն աստիճաններով բարձրը է: Բեմի վրայ գտնւում է սեղանը, ուր պատարագ է մատուցանուում: Բեմիցն է քարոզում եպիսկոպոսը՝ աթոռի վրայ նստած: Այսեկ իրաւունք ունին բարձրանալ միայն հոգեսորականները, կամ որոց իրաւունք է տրուած: Սեղանը շինուած է բեմի վրայ, հարկաւոր ժամանակ քաշում են վարագոյրը: Բեմի մէջտեղում հաստատուած է օծուած՝ խաչաձև վէմը: Առանց այս քարին շի կարելի պատարագ մատուցանել:

Բեմի վրայ վէմ քարի ուղղութեամբ շինուած է խաչակալը, որի աջ և ձախ կողմերում դռներ կան: Այս դռների վրայ պէտք է նկարել Թաղէսս և Բարդողիմէսս առաքեալների պատկերները, որոնք հայոց եկեղեցու զլիսաւոր սիւներն են:

Երկու դռների մէջ տեղում վէմ քարի վրայ երեք աստիճան է շինուած, որոց վրայ զրած է ամենից բարձր՝ խաչ, ետոյ՝ Քրիստոսի պատկերը

(գաստառակ), իսկ վերջը՝ աւետարան։ Աստիճանների ետևում Աստուածածնի պատկերն է՝ Յիսուսին գրկած։ Այս երեք աստիճանների վրայ դրած է լինում միւռոնամանը և մասնատուփը։

Մեղանի աջ դրան կողմում՝ ներսից ընծայարանն է, որտեղ սկիզն են դնում։

Եկեղեցու հիմքի գանազան կողմերում դնում են առաքեալների, աւետարանիչների և Ս. Գրիգոր Լուսաւորչի անուններով օծած քարեր—ընդամենը 16 հատ և ապա սրանց վրայ հիմն են ձգում, որովհետև քրիստոնէութիւնը սրանք տարածեցին ամեն տեղ—հիմնեցին գանազան տեղերում եկեղեցիներ և նրա հիմքը եղան։ Այդ քարերն անտաշ պիտի լինին, որ նշանակում է, թէ առաքեալներն ուսում չունէին և սուրբ Հոգով շնորհով էին քարոզում։ Քարերն առաջ լուանում են, որ նշանակում է մկրտել և ապա օծում են, որ նշանակում է դրոշմ։ Բեմի վրայ է վէմ քարը—սա քրիստոսի օրինակն է, որ իւր հիմնած եկեղեցու սուրբ սեղանի վրայ բազմած է։

Բեմի աջ և ձախ կողմերում երկու խորաններ կան—աջակողմնանը զգեստաւորուելու համար է, իսկ ձախակողմնանը՝ զգեստները պահելու համար։

Ջինութիւնն աւարտելուց ետոյ եկեղեցին օծում են։

ՄՐՅԱՋԱՆ ԱԽՈԹՆԵՐ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Մկին—Այն անօթն է, որի մէջ պատարագիչը գինի է ածում, հաց՝ նշխարհ դնում, որ աղօթելով դառնում է Քրիստոսի իսկական մարմինն ու արիմնը։ Սկիզնի բերնին դնում են մի ուրիշ անօթ, որի անունն է մաղղմա։ Սկիզնը շնում են կամ ոսկուց և կամ արծաթից։

Մասնւատոսի—Փոքրիկ տուփ է՝ ոսկուց կամ արծաթից շինած, որի մէջ դնում են մասը՝ կամ հաղորդը և երբ մինը յանկարծ հիւանդանում է կամ եկեղեցի չի կարողանում գնալ, տուն են տանում և հաղորդում։

Միւռոնանան—Նոյնպէս ոսկուց կամ արծաթից շինած մի աման է, ըստ մեծի մասին աղաւնու նման։ մէջն ածում են սուրբ միւռոնը, մկրտում երեխաններին կամ օծում պատկերներ։

Քշոց—Քշոցը զարդ է, կոթը փայտից է, իսկ վերեկի կլոր մասնի վրայ Մերովբէ և Քերովբէ հրեշտակապետների սլատկերներ կան նկարած, որ նշանակրում է, թէ նրանք ևս սպասաւորում են պատարագի ժամանակ։

Բուրվառ—Մէջը կրակ են ածում և վրան խունկ ծխում, որ նշանակում է, թէ ինչպէս այս խնկի ծուխը դէպի վեր է գնում, այսպէս էլ մեր աղօթքը դէպի Աստուած ենք ուղղում։

Խաչվառ—Նկարագրել։

Զ Դ Ե Ս Ց

ԴՊԻՐՆԵՐԻ ԿԱՄ ՏԻՐԱՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շապիկ—Դլսից մինչև ոտները՝ Երկայն,
հասարակ՝ մաքուր շապիկ, որ նշանակում է, թէ
լինչպէս արտաքուստ մաքուր է շորը, այսպէս էլ
ներքուստ՝ սիրտը սրա նման մաքուր պիտի լինի:

ՍԱՐԿԱԾԱԳԻ ՀԱՄԱՐ

Ուրառ—Երկայն, լայն ժապաւէնի նման,
կտոր, որ ձգում է ձախ թևի վրայ: Սա նշանա-
կում է, թէ սարկաւագն աւետարանի լուծը դեռ
ամբողջապէս չէ կրում, այլ՝ մասամբ, այն է ձախ
ուսով: Սարկաւագը հագնում է և շապիկ:

ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Քահանան երբ զգեստաւորւում է և պատա-
րագ է մատուցանում, նշանակում է նոյնն է ա-
նում, ինչ որ Քրիստոն է արել: Պատարագի
զգեստները նշանակում են Քրիստոսի կրած շար-
շարանքները: Քահանայի զգեստները սրանք են:

Շապիկ—Երկայն, վկից մինչև ոտները, դոյ-
նը սպիտակ: Սա նշանակում է, 1, այն սպիտակ
հանդերձը, որ չերովկիս հագցրաւ Քրիստոսին
ծաղրելու համար. 2, քահանային վայել է սպ-
տարագի ժամանակ սպիտակ հագնել, որով-

հետև քահանայի գործը հրեշտակի գործ է: Աւե-
տարանիչը հրեշտակի շորերը սպիտակ է նկա-
րագրում:

Գօտի—Նշանակում է այն խարագանը,
որով Քրիստոսին խփում էին՝ սեանը կապած:

Բազգան—Այն կապանքն է, որով հրէա-
ները կապեցին Յիսուսի ձեռները Գիթսեմանում:

Փորուրար—Նշանակում է 1, այն կապան-
ը ը, որով Քրիստոսին սեանը կապեցին, 2 Աս-
տուծու պատուիրանի լուծն է, որը քաղցը է
և թեթև: Այս լուծը սարկաւագը ձախ ուսով է
միայն տանում, իսկ քահանան՝ և աջ և ձախ ու-
սով—ամբողջապէս:

Շուրջառ կամ նափորտի—Նշանակում
է կարմիր քղամիտը, որով ծածկեցին Քրիստոսին:

Սաղաւարտ—Նշանակում է այն փշեայ
պսակը, որ Քրիստոսի զլիսին դրին:

Վակաս—Ուսի վրայ է կրում քահանան.
Վրան նկարած է 12 առաքեալների պատկերը:

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՐ

Եպիսկոպոսն ունի ալն բոլոր զգեստներն՝
ինչ որ քահանան:

Բացի զբանից ունի—Խոյքը կամ թագ, որ
միենոյն նշանակութիւնն ունի, ինչ որ քահանայի
սպղաւարտը:

Եմիփորոն—Կրում են շուրջառի վրայից,
սա է յատուկ եպիսկոպոսական զգեստը:

ԵՊԻՍԿՈՊՈՍՍ.ՊԵՏԻ ԿԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ

Քացի քահանայի և եպիսկոպոսի զգեստներից, ունի նաև կոնքեռ, որը քառակուսի ձև ունի և կախուած է լինում գոտկից՝ ձախ կողմից և հասնում է մինչև ծունկը։ Կոնքեռը նշանակում է 1, այն դենջակը, որով Յիսուս աշակերտների ոտները սրբեց։ 2, հովուական մաղայիս։ Կոնքեռը կը լու իրաւունք միմիայն կաթողիկոսն ունի։

ԳԼ. ԻԵ.

Պ Ա Տ Ա Ռ Ա Դ Ի Ե Ր Գ Ե Ր

Խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հնումն Զաքարիա։ Ընկալ առ ի մէնջ գինկանուէր մաղմանս, որպէս զարտարագն Աքէլի, զնոյի եւ զԱրրահամու։

Խունկ ենք մատուցամ (աղօթում) քո առաջը հին եկեղեցւու Զաքարիա քահանայի օրինակի նման Ընդունիր մեր կողմից ինկանուէր մաղթանքը՝ Աքէլի, Նոյի և Արրահամի պատարագի պէս։

Ողջոյն տուք միմնանց ի համբոյր սրբութեան եւ ոքք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ որունս ելք եւ աղօթեցէք։


Ողջոյն (բարե) տուէք մէկ մէկու սրբութեան համբուով և որոնք չեն կարող հաղորդուիլ աստուածային խորհրդից, թուղ դրան առաջը դուրս գան և աղօթեն։

Մի ոք յերեխայից, մ՞ր ոք ի թերահաւատից եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից, մերծեսցի յԱստուածային խորհուրդ։

Ոչ ոք երեխաներից, (չմկրտուածներից) թերահաւատներից, ապաշխարանքի տակ եղողներից և անօմաքուրներից (ողջերից) չմօտենան ալս աստուածային խորհրդին։



||



Յ Ա Ն Կ

§

	Երես
Ա. Անառակ որդի	5
Բ. Ողորմած Սամարացու առակը	7
Գ. Որոժի առակը	8
Դ. Ալգու մշակների առակը	9
Ե. Քանչքարների առակը	10
Զ. Մեծատան և աղքատ Պաղարոսի առակը	12
Է. Յովհաննէս Մկրտիչ	13
Ը. Յիսուսի մկրտութիւնը	16
Թ. Յիսուսի տաճար տաճութիւնը	17
Ժ. Յիսուս մտնում է Երուսաղէմ	19
ԺԱ. Յիսուսի խաչելութիւնը	22
ԺԲ. Յիսուսի թաղումն և տարութիւնը	25
ԺԳ. Յիսուսի համբարձումն	25
ԺԴ. Հոգեզալուստ	26
ԺԵ. Ս. Ստեփաննոս նախավկալ	27
ԺԶ. Սաւուզի զարձը	28
ԺԷ. Սանդուխտ կոյս	32
ԺԸ. Ս. Գրիգոր Լուսաւորչի Խորվիրապ մտնելը	33
ԺԹ. Ս. Գրիգոր Լուսաւորչի Խորվիրապից զուրս զալը	33
Ի. Ս. Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց	34
ԻԱ. Թարգմանիչներ	38
ԻԲ. Ասովմեանց նահատակութիւն	40
ԻԳ. Խաչվերաց	54
ԻԴ. Եկեղեցու ձեւը	55
ԻԵ. Պատարազի երդեր	62



С арм
2911

ԲՈ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՅ ԵՎ ՏԵՍՈՅ, ԿՐՈՅՔ
ՀԵՏԵՎԱԾ, ԳՈՋՈՒՐԵՐԸ

I.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՅՈՐԵԿ ԵՐԳԱԿ

	Ը.	Ա.
1. ԳՈՋՈՒՐԵՐԸ ԿՐՈՅՔ ՀԵՏԵՎԱԾ ԽԱՏՈՐ Ա.		1 75
2. ԳՈՋՈՒՐԵՐԸ ԿՐՈՅՔ ՀԵՏԵՎԱԾ ԽԱՏՈՐ Ա.		2 5
3. ՄԻ ՔԱՅԵ ԽՈՐ ՀԱՅ ԿՐԵԿԱԿԱՐԵՐԻՆ.		— 10
	ՄԻԶԻ ՃՐ ՃԱԿԱԿ	
4. ՈՒ ՈՒՅՈՒՄ ՔՐԵՍՈՎԵԱԿ, ԿՐՈՅՔ ՀԱՄԱ. Գ. *		1 50
5. ՈՒՍՈՒՑՈՒՄ ՔՐԵՍՈՎԵԱԿ, ԿՐՈՅՔ Ա.		— 50
6. ՏԱՐ ՊԱՏՈՎԻՐԱԿ		— 50

II.

ԱՇՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7. ԳՈՋՈՏԵՏՐ Կ'Օ	Ա. ԹԱՐԻ	— 20
8. ԳՈՋՈՏԵՏՐ *	Ա. *	— 20
9. ԳՈՋՈՏԵՏՐ *	Գ. *	— 20
10. ՄՐՅԱ. ՊԱՏԻ. ՀԵՏ ու խափ 1, (բեղարձող)	Գ.	— 30
11. ՄՐՅԱ. ՊԱՏԻ. ՀԵՏ ու խափ 2, (հաճախառ)	Գ.	— 45
12. ՄՐՅԱ. ՊԱՏԻ. Նոր ու խափ 1. (նախարարն)	Գ.	— 30
13. ՄՐՅԱ. ՊԱՏԻ. Նոր ու խափ 2. (Կարծ քաշար)	Գ.	— 40

Եմ զիազրերն ստանալ ցանկացազները կա-
րող են դիմել —

1. Տիֆլիս: Սաքենիկ Ս. Տականի, Կոմմերս-
կու ուսումնական դպրություն:

2. " Центральная книжная торговля.

Ենթ դիմումներն ստանալ են 20% գեղջ կան-
ոնի վճարմանը:

Գիշեր է 30 կու.

* Գ. Համարը գործը տառերեսը դեռ չէ տպա-
գրուել:

ՀՀ Ազգային գրադարան



NL0145964

